# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2021թվականի N 16-Ա

## ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 03 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Նարեկ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Նարեկ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 25-ի թիվ 03 նիստի օրակարգի հետևյալ հարցերը՝

1. /17-Ա/ Համայնքի <<Արևիկ>> ՀՈԱԿ մանկապարտեզի վերաբացման մասին: /Զեկ. Ա.Հովհաննիսյան/
2. /18-Ա/ Նարեկ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասը երկարաժամկետ վարձակալությամբ տրամադրելու: մասին : /Զեկ. Փ.Հակոբյան/
3. /19-Ա/ Համայնքի ավագանու 15 մայիսի 2020 թվականի թիվ 21-Ա որոշումը նոր խմբագրությամբ շարադրելու մասին : /Զեկ. Ա.Հովհաննիսյան/
4. /20-Ն/ Համայնքի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին: /Զեկ. Քաջիկ Բեգլարյան/
5. /21-Ա/ Համայնքի համար հակակարկտային կայանք ձեռքբերելու մասին: /Զեկ. Ա.Հովհաննիսյան/
6. /22-Ա/ Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի օտարման թույլտվության մասին : / Զեկ. Փ.Հակոբյան/

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ կողմ

ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ կողմ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2021թվականի N 17-Ա

### ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԵՎԻԿ>> ՀՈԱԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և 18-րդ հոդվածի 42-րդ կետով.

1. 2021 թվականի ապրիլի 3-ից վերաբացել Նարեկ համայնքի <<Արևիկ>> ՀՈԱԿ մանկապարտեզը:
2. Մանկապարտեզը կգործի ս/թ-ի ապրիլի 1-ից սեպտեմբերի 30-ը:
3. Համայնքի բյուջեից տրամադրել համապատասխան գումար ՝ կորոնավիրուսի համավարակի կանխարգելիչ աշխատանքներն իրականացնելու համար:
4. Առաջարկել մանկապարտեզի տնօրեն Աննա Սուսունյանին խստորեն հետևել ՀՀ պարետի ցուցումներին :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ

ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՄԱՐՏԻ 2021թվականի N 18-Ա

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1,03968 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18- րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով և 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 14 հունվարի 2010 թվականի N16-Ն որոշմամբ հաստատված << Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման >> կարգի 3-րդ գլխի 9-րդ կետով

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Նարեկ համայնքի վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող 1,03968 հա հողամասի երկարաժամկետ վարձակալությանը.

1) 1,03968 հա , որից 0,84368 հա Արոտավայր և 0,1960 հա Այլ հողատեսք , կադաստրային ծածկագիրը 03-063-0328-0001-ից :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ կողմ

ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ կողմ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ կողմ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2021թվականի N 19-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 21-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով և 34-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Արարատի մարզպետ պարոն Թևոսյանի 26 փետրվարի 2021 թվականի թիվ 01/01759-2021 գրությունը

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Նարեկ համայնքի ավագանու 15 մայիսի 2020 թվականի ' <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 21-Ա որոշումը շարադրել նոր խմբագրությամբ.

<<ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2020 թվականի N25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 6 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^{3}$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Նարեկ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) համաձայն հավելվածի:

2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **$14^{3}$** հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)»

գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

| Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները Ձև 1 | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության | |
| *ԳԳ-1* | *Բազմամյա տնկարկ* | 0.79 | *Այլ հողատեսքեր* | 0.79 |
| *ԳԳ-2* | *Վարելահող* | 0.79 | *Բազմամյա տնկարկներ* | 0.79 |
| ***Ընդհանուր*** | | 1.58 | | |
| | | | **Բնակավայրերի** | |
| *ԳԲ-1* | *Այլ հողատեսք* | 0.05 | *Հասարակական կառուցապատման* | 0.05 |
| *ԳԲ-2* | *Այլ հողատեսք* | 0.03 | *Հասարակական կառուցապատման* | 0.03 |
| *ԳԲ-3* | *Այլ հողատեսք* | 0.03 | *Հասարակական կառուցապատման* | 0.03 |
| *ԳԲ-4* | *Այլ հողատեսք* | 0.1 | *Հասարակական կառուցապատման* | 0.1 |
| *ԳԲ-5* | *Վարելահող* | 0.04 | *Հասարակական կառուցապատման* | 0.04 |
| *ԳԲ-6* | *Վարելահող* | 0.03 | *Հասարակական կառուցապատման* | 0.03 |
| ***Ընդհանուր*** | | 0.28 | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտ. նշանակության օբյեկտների | |
| *ԳԱ-1* | *Վարելահող* | 0.11 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.11 |
| *ԳԱ-2* | *Վարելահող* | 0.15 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.15 |
| *ԳԱ-3* | *Այլ հողատեսքեր* | 0.16 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.16 |
| *ԳԱ-4* | *Վարելահող* | 0.03 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.03 |
| *ԳԱ-5* | *Այլ հողատեսքեր* | 0.035 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.035 |
| *ԳԱ-6* | *Բազմամյա տնկարկ* | 0.16 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.16 |
| *ԳԱ-7* | *Վարելահող* | 0.05 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.05 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԳԱ-8 | Արոտ | 1.54 | Գյուղատնտեսական արտադրական | 1.54 |
| ԳԱ-9 | Վարելահող | 0.18 | Գյուղատնտեսական արտադրական | 0.18 |
| ԳԱ-10 | Այլ հողատեսքեր | 1.54 | Գյուղատնտեսական արտադրական | 1.54 |
| **Ընդհանուր** | | *3.955* | | |
| | | | **Ջրային հողեր** | |
| ԳՋ-1 | Արոտ | 0.23 | Հիդրոտեխնիկական, ջրատնտեսային այլ օբյեկտներ | 0.23 |
| **Ընդհանուր** | | 0.23 | | |
| | | | **Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթ. օբյեկտների** | |
| ԳԷ-1 | Վարելահող | 0.7 | Էներգետիկայի օբյեկտների | 0.7 |
| ԳԷ-2 | Բազմամյա տնկարկ | 0.79 | Էներգետիկայի օբյեկտների | 0.79 |
| Ընդհանուր | | 1.49 | | |
| | **Բնակավայրերի հողերից՝** | | | |
| | | | **Գյուղատնտեսական նշանակության** | |
| ԲԳ-1 | Այլ հողեր | 0.63 | Այլ հողատեսքեր | 0.63 |
| **Ընդհանուր** | | 0.63 | | |
| | | | **Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթ. օբյեկտների** | |
| ԲԷ-1 | Այլ հողեր | 0.01 | Էներգետիկայի հողեր | 0.01 |
| **Ընդհանուր** | | 0.01 | | |
| | | | **Բնակավայրերի** | |
| ԲԲ-1 | Բնակելի կառուցապատման (տնամերձ կառուցապատում) | 0.03 | Հասարակական կառուցապատման | 0.03 |
| **Ընդհանուր** | | *0.03* | | |
| | **Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթ. օբյեկտների** | | | |
| | | | **Բնակավայրերի** | |
| ԷԲ-1 | Էներգետիկայի հողեր | 0.01 | Հասարակական կառուցապատման | 0.01 |
| **Ընդհանուր** | | 0.01 | | |
| | **Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտ. նշանակության օբյեկտների** | | | |
| | | | **Գյուղատնտեսական նշանակության** | |
| ԱԲ-1 | Գյուղատնտեսական արտադրական | 1.31 | Բազմամյա տնկարկներ | 1.31 |
| **Ընդհանուր** | | 1.31 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | **Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթ. օբյեկտների** | |
| *ԱԷ-1* | *Գյուղատնտեսական արտադրական* | **1.01** | *Էներգետիկայի օբյեկտների* | **1.01** |
| | **Ընդհանուր** | ***1.01*** | | |
| | **Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)** | | | |
| | **Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթ. օբյեկտների հողերից՝** | | | |
| | | | **Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտ. նշանակության օբյեկտների** | |
| *ԷԱ-1* | *Կոմունալ օբյեկտների* | **0.55** | *Գյուղատնտեսական արտադրական* | **0.55** |
| | **Ընդհանուր** | 0.55 | | |
| | | | **Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթ. օբյեկտների** | |
| *ԳԷ-1* | *Արոտ* | **0.5** | *Կոմունալ օբյեկտների* | **0.5** |
| | **Ընդհանուր** | ***0.5*** | | |
| | **Գյուղատնտեսական հողերից՝** | | | |
| | | | **Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթ. օբյեկտների** | |
| *ԳԷ-3* | *Վարելահող* | **1.72** | *Էներգետրկայի օբյեկտների* | **1.72** |
| *ԳԷ-4* | *Այլ հողատեսքեր* | **1.17** | *Էներգետիկայի օբյեկտների* | **1.17** |
| *ԳԷ-5* | *Արոտ* | **5.49** | *Կոմունալ օբյեկտների (գերեզման)* | **5.49** |
| | **Ընդհանուր** | ***8.38*** | | |
| | **Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)** | | | |
| | **Գյուղատնտեսական նշանակության հողերից՝** | | | |
| | | | **Բնակավայրերի** | |
| *ԳԲ-1* | *Վարելահող* | **0.13** | *Ընդհանուր օգտագործման (փողոցներ)* | **0.13** |
| *ԳԲ-2* | *Վարելահող* | **0.15** | *Ընդհանուր օգտագործման (փողոցներ)* | **0.15** |
| *ԳԲ-3* | *Վարելահող* | **0.06** | *Ընդհանուր օգտագործման (փողոցներ)* | **0.06** |
| *ԳԲ-4* | *Վարելահող* | **2.81** | *Բնակելի կառուցապատման (տնամերձ կառուցապատում)* | **2.81** |
| | **Ընդհանուր** | 3.15 | | |
| | **Բնակավայրերի հողերից՝** | | | |
| | | | **Բնակավայրերի** | |
| *ԲԲ-1* | *Բնակելի կառուցապատման (տնամերձ կառուցապատում)* | 0.23 | *Ընդհանուր օգտագործման (փողոցներ)* | 0.23 |
| | **Ընդհանուր** | 0.23 | | |

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային

նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ կողմ

ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ կողմ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ կողմ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2021թվականի N 20-Ն

### ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով

Նարեկ համայնքի ավագանին որոշում է՝

Նարեկ համայնք 2021 թվականի տարեկան բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները

1 . << Կառավարման մարմն. պահպանում>> 01.01.01.51 4269 հոդվածից 80000 ՀՀ դրամ տեղափոխել 4267 հոդվածին :

2. Պահուստային ֆոնդից 230000 ՀՀ դրամ տեղափոխել << Կառավարման մարմն. պահպանում>> 01.01.01.51 4239 հոդվածին- ծառայությունների մատուցման համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ

ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2021թվականի N 22-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂ.ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 18-րդ կետով և 43-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հողատարածքները օտարելու մասին առաջարկը, որից գոյացած գումարը ներդրվելու է համայնքում գյուղատնտեսության զարգացման համար.

Նարեկ համայնքի ավագանին որոշում է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդային կարգով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող

1. Գյուղ.նշանակության հողատարածք՝ 19,1735 հա (մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի 100%-ի չափով).
   1.1 19,1735 հա Արոտավայր, կադաստրային ծածկագիր՝ 03-063-0132-0011 :
2. Աճուրդն իրականացնել մինչև 2021 թվականի տարեվերջ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ

ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2021թվականի N 21-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՔ ՁԵՌՔԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի 12-րդ և13-րդ ենթակետերով, 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետով,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի <<Երկու հատ հակակարկտային կայանք ձեռքբերելու մասին>> առաջարկությունը, որը կնպաստի համայնքում մոտ 120,0 հա հողատարածք պաշտպանելու կարկուտից, ինչի արդյուքնում հողօգտագործողները կստանան որակյալ բերք.

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի կարիքների համար ձեռք բերելու երկու հակակարկտային կայանք:
2. Առաջնորդվել Գնումների մասին ՀՀ օրենքով և կազմել համապատասխան փաստաթղթերի փաթեթ:
3. Հաջորդ ավագանու նիստին ներկայացնել գնումների արդյունքները

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ

ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ**